ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-19/22 -166-19

Ք. Երևան

«25» ապրիլի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Սվետլանա Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում» միջոցառման կազմակերպման և անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1274000 (միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

4.1.1. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.2. Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010965
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝

---------- Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԵՅՅՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741

Տնօրեն՝

---------- *Վ. Բարսայան*
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«25» 04 2019 թ. կնքված
ՍՊ ԳՀԾՁԲ-19/22-166-13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	92621110/10	*	դրամ	1274000	1		10.08.2018-06.09.2018
						ՀՀ 10 մարզերի մարզկենտրոններում:	օգոստոսի 10-20-ը ներառյալ,
						Հանրապետական եզրափակիչ փուլը ք. Վանաձոր	2018 թ. սեպտեմբերի 3-ից 6-ը ներառյալ,

ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում

Ծրագրի նպատակն է՝ բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, մարզերի գյուղական ազգաբնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում:

Գյուղական մարզական խաղերի ծառայությունը մատուցվում է երկու փուլերով՝ մարզային և հանրապետական:

Մարզային փուլը անցկացվելու է 2019 թվականի օգոստոսի 10-ից 20-ը, ՀՀ 10 մարզերի մարզկենտրոններում:

Մարզերում մրցույթը կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է նախատեսված վկայագրերը (հավաստագրերը) հասցնել ՀՀ մարզկենտրոններ (օգոստոսի 10-20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում՝ ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցում նշված ժամկետից 3 օր առաջ) և տեղերում կազմակերպել մրցանակակիրների պարգևատրման արարողությունը:

Գյուղական մարզական խաղերի **հանրապետական եզրափակիչ փուլը** կազմակերպվելու և անցկացվելու է 2019 թվականի սեպտեմբերի 3-6-ը, Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Մասնակիցը պարտավոր է Վանաձոր քաղաքում ապահովել մարզադաշտ և ատլետիկական մարզադահլիճ (մանեժ) (400 մետր վազքուղյակներով, ցատկափոսով, պտտաձողով, խաղադաշտը հնձված, վազքուղիները գծված, որտեղ անցկացվելու է՝ վազք 100 մետր, վազք 1000 մետր, թենիսի գնդակի նետում, տեղից հեռացատկ և հենում կախված դրությունից ձգումներ մրցումները): Մարզադաշտը և մարզադահլիճը իրենց հարակից տարածքներով ձևավորված ՀՀ դրոշներով և մրցման խորհրդանշով պաստառներով, տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մասնակիցը պարտավոր է ապահովել համապատասխան մարզագույք, հաղորդավարի ծառայություն, ռադիո տեխնիկա-բարձրախոսներով, խաղերի ժամանակ մրցումների ընթացքը կազմակերպելու, պատվանդան, ինչպես նաև մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար:

Մարզական խաղերին կմասնակցեն << 10 մարզերի հավաքական թիմերը, թվով 110 մարզիկ-մարզուհի:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված մարզերին պարգևատրելու համար

1. Ֆուտբոլի գնդակ - 36 հատ
2. Գնդակ վոլեյբոլի - 48 հատ
3. Գնդակ բասկետբոլի - 30 հատ
4. Վոլեյբոլի ցանց- 12 հատ
5. ֆուտբոլի դարպասի ցանց - 12 հատ
6. Բասկետբոլի ցանց օղակով – 9 հատ

1. Ֆուտբոլի գնդակ՝ բնական կամ արհեստական կաշվից, N 5 չափի (68-70 սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով):
(1-ին տեղ՝ 14 հատ, 2-րդ տեղ՝ 12 հատ և 3-րդ տեղ՝ 10 հատ):

2. Գնդակ վոլեյբոլի՝ Բնական կամ արհեստական կաշվից, N 5-6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամեռով), բազմերանգ գունավորմամբ:
(1-ին տեղ՝ 18 հատ, 2-րդ տեղ՝ 16 հատ և 3-րդ տեղ՝ 14 հատ):

3. Գնդակ բասկետբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից, N 5-6 չափի (75-88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկուգույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար:
(1-ին տեղ՝ 12 հատ, 2-րդ տեղ՝ 10 հատ և 3-րդ տեղ՝ 8 հատ):

4. Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությանը 9.5-10 մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեն ներով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15 մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9 մ հեռավորության վրա տեղադրված են 1 մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ:
(1-ին տեղ՝ 5 հատ, 2-րդ տեղ՝ 4 հատ և 3-րդ տեղ՝ 3 հատ):

5. Գործած ցանց (ֆուտբոլի դարպասի ցանց)՝ ցանցի բարձրությունը 2 մ լայնությունը 7 մ: Գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից, նախատեսնված է փոքր դարպասների համար:
(1-ին տեղ՝ 4 հատ, 2-րդ տեղ՝ 4 հատ և 3-րդ տեղ՝ 4 հատ):

6. Բասկետբոլի ցանց օղակով՝ պատրաստված մետաղից. օղակի տրամագիծը 45 սմ, ներկված կարմիր գույնով, ցանցը գործվացքը 5x5 սմ անցքերով, տարբեր գույներով, սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3 մմ հաստությամբ թելից:
(1-ին տեղ՝ 4 հատ, 2-րդ տեղ՝ 3 հատ և 3-րդ տեղ՝ 2 հատ):

Վկայագիր (Հավաստագիր). մարզային փուլի մրցումներին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին և մարզիկներին պարգևատրելու համար: Չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ:

Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. Մարզային փուլից 10 օր առաջ, հավաստագրի ձևը կցվում է հայտին:

-
- Մարզային փուլի համար՝ 36 հատ x 10 մարզ=**360 հատ**
- Հանրապետական փուլի համար՝ **39 հատ**
-

Մեդալներ՝ չափսը՝ 5-6 սմ տրամագծով x 3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից.

Մասնակիցը մեդալի տեսքը պարտավոր է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. հանրապետական փուլից 10 օր առաջ:

36 հատ

Հուշանվեր՝ (Գավաթներ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերի համար՝ հնգամարտ մարզաձևից) պարգևատրելու համար. ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով նմանտիպ, պատվանդանի տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ, հանրապետական փուլից 10 օր առաջ:

- 1-ին տեղ՝ 60 սմ բարձրությամբ, **(1 հատ)**
- 2-րդ տեղ՝ 55 սմ բարձրությամբ, **(1 հատ)**
- 3-րդ տեղ՝ 50 սմ բարձրությամբ, **(1 հատ)**
-

Մարզադահլիճի վարձակալում Վանաձոր քաղաքի մարզաբազաներից մեկում:

Մարզադահլիճների ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդանի առկայություն: Մարզադահլիճի կահավորման տեսքը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ՝ 2 **օր**

Բեռնատար ավտոմեքենայի վարձակալում՝ (Երևան-Վանաձոր-Երևան):

Մարզական խաղերի ժամանակ մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները.

- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից,
մետաղական ամրակով, A4 (210 x 297մմ) ձևաչափի թերթերի համար.
6 հատ

Ժապավեն-կպչուն պոլիեթիլային ժապավեն (սկոչ) 48 մմ x 100 մ չափսի.
1 հատ

Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ,
տնտեսական, մեծ, գլան-փաթաթված ժապավեն
48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝
0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ,
5 հատ

Հաշվիչ (կալկուլյատոր)
1 հատ

Թուղթ A4 չափսի1 (21 x 29.7), չկավճած թուղթ,
օգտագործվում է տպագրման համար, թելիկներ
չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված
80 գ/մ^2 (210 x 297) մմ.
2 հատ

Ծրար A5 ձևաչափի: Ծրարներ չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից 'նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար՝ սահմանված չափի և ձևի.
50 հատ

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի.
10 հատ

Գելային-գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել).	2 հատ
Գրիչ գնդիկավոր. Տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափսերի.	10 հատ
Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ:	12 հատ

** Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 22 հունվարի 2019 թ. N 13 Ա/1 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության գյուղական մարզական խաղերի 2019 թվականի մրցույթի կանոնակարգի պահանջների համաձայն:*

*** Միջոցառման անցկացման համար Կատարողը՝ 2-րդ փուլի անհրաժեշտ հավաստագրերը հասցնում մրցավայրեր՝ ՀՀ 10 մարզկենտրոններ, եզրափակիչ փուլում մարզագույքը ք. Վանաձոր: Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության կողմից պարգևատրման ցանկի համապատասխան կազմակերպում է եզրափակիչ փուլի պարգևատրումը, կազմում է մրցանակների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում դառում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:*

**** Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը և համաձայն ժամանակացույցի կատարել ծառայությունները:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010965
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝

Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՊԵՅՅՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741

Տնօրեն՝

Ս. Մարգարյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«25» 04 2019 թ. կնքված
ՍՊ ԳՀԾՁԲ 19/22_166-19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/10	« ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում » մրցույթի անցկացում	0	0	0	0	0	0	0	1274.0	1274.0	1274.0	1274.0	1274.0	1274.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010965
ՀՎՀՀ 02586282
Գլխավոր քարտուղար՝
-------------------Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741

Տնօրեն՝
-------------------Մ. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«25» 04 2019 թ. կնքված
ՍՊ ԳՀԾՁԲ-19/22 ծածկագրով պայմանագրի
-166-19

Պայմանագրի կողմ
«ՊԵՅՅՈ» ՍՊԸ
ՀՀ, ք. Ստեփանավան, Գ.
Նժդեհի 37
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16033017291900
ՀՎՀՀ՝ 06955741

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության
հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010965
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Հավելված 3.1
«25» 09 2019 թ. կնքված
ՍՊ ԳՀԵՁԲ-19/22-166-19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն